լայ շինուած է, 35 տնուոր գաղթական թուրք բնակիչ ունի։ Սորա հիւսիսն բարձրացած է դաշտիս մէջ կըղզիացած Խըժբք—Դաւոյի հովիտը, որ ընդարձակ արտօրայք և մարգագետիններ ունի մօտ մի գիւղի քաւշան, սակայն ջուր չունենալով անվար մնացած է և մեծ մասամբ արօտավայր է Հիզան, Քարձոր, Միրանկներ քրդ. գիւղօրէից և Գարա-Քիլիսէի, որոց միջավայրն գտնուած լինելուն։

Այստեղ Շեռեան դարձեալ իւր ընթացք կը շարունակէ արևելեան հարաւոյ և արևելքի միջին ուղղութեամբ, ուղղուած դէպի Ցամբաղ՝ ձախ կողմի վերայ թողով Դամզխան գիւղն, որ 1 ժամ մեր արևելքն կընկնի։

Մենք մի ժամու չափ խճուղիով ուղղուեցանք արևելք նաև տակաւ առ տակաւ Շեռեանէն հեռացանք, Դամզխանայ ուղղութեան վերայ, որև Խըժբք Դաւոյի վերջաւորութիւնն է. դարձանք դէպի Գարա—Քիլիսէ որ ուղղակի մէկ ժամ մեր արևելեան հիւսիսն է։

Դամզխան Խճուղւոյն աջ կողմն և Շեռեանայ ձախ կողմն մի գիւղ է 30 տուն, որք Թերեքեմէ թուրքերէ կազմուած են։ Գիւղս կը պատկանի Գարա-Քիլիսէի վիճակին։

Մենք Ալաշկերտի դաշտի հիւսիսային և հարաւային գիւղերն նկարագրեցինք. այժմ կը դառնամք դաշտի միջավայրն գտնուած քանի գիւղօրէից վերայ խօսիլ։